ՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐԸ

ԲԱՌԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ: ԲԱՌԻ ՈՒՂԻՂ ԵՎ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐ

Հինգերորդ դասարանում դուք ծանոթացել եք մենիմաստ և բազմիմաստ բառերին: Նշել եք, որ կան բառեր, որոնք մեկ իմաստ են արտահայտում, շատ բառեր էլ մեկից ավելի իմաստներ ունեն: Գիտեք՝ այդ իմաստներից մեկը համարվում է հիմնական իմաստ և բառարաններում նշվում է առաջինը: Մյուսները կոչվում են երկրորդական իմաստներ, օրինակ՝ տուն բառն իր հիմնական իմաստով նշանակում է «շենք, շինություն, կառույց», երկրորդ իմաստով՝ «ընտանիք, գերդաստան», այն նշանակում է նաև «մարդու մշտական բնակավայրը՝ հայրենի տունը, գյուղը, քաղաքը, երկիրը»:

Երկրորդական իմաստների շարքում կարող են լինել նաև բառի փոխաբերական գործածության դեպքեր: Օրինակ՝ տուն փոխաբերաբար խոսակցական ոճում կարող է նշանակել «խելք, միտք»:

Բառերը կարող են ունենալ ուղիղ և փոխաբերական իմաստներ:

Բառի սովորական իմաստը կոչվում է ուղիղ իմաստ:

Խոսքի մեջ բառը կարող է գործածվել նաև ոչ սովորական իմաստով՝ փոխարինելով այլ բառերի:

Փոխաբերական է իմաստը բառի փոխաբերական կիրառությամբ արտահայտված իմաստն է:

Թխպոտ երկինք բառակապակցության մեջ թխպոտ բառը ուղիղ իմաստով է գործածված, իսկ տխուր երկինք բառակապակցության մեջ տխուր բառը գործածվում է փոխաբերական իմաստով: Այս դեպքում փոխաբերության հիմքը երկնքի արտաքին նմանությունն է՝ մռայլ է, անգույն է, տխուր է: Փոխաբերությունը կարծես սեղմ համեմատություն է:

Քննի՛ր լալկան երեխա և լալկան ուռի, ծանր ճամպրուկ և ծանր մառախուղ բառակապակցությունները՝ մեկնաբանելով բառերի ուղիղ և փոխաբերական իմաստները:

Առաջադրանքներ

1. Բառակապակցությունների իմաստն արտահայտի՛ր մեկ բառով:

ա) մեղուների խումբ, բ) ձիերի խումբ, գ) անտառի արքա, դ) ծիծաղի արքա, ե) վարդագույն քաղաք, զ) մայր գետ:

2. Տրված բառերը ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածի՛ր նախադասությունների մեջ:

Հեքիաթ, *ցուրտ*, *կծու*, *ջերմ*, *ծանր*, *խոր*:

3. Առաջին սյունակի յուրաքանչյուր բառ փոխաբերական իմաստով միացրո՛ւ երկրորդ սյունակի համապատասխան բառին: Անհրաժեշտության դեպքում բառը ենթարկի՛ր փոփոխության:

առաջին	քույր
գթություն	ծիծեռնակ
անափ	երկինք
յոթերորդ	սեր
կրակի	բնություն
մայր	գին

4. Տրված տեքստի ընդգծված բառերն ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածի՛ր նախադասությունների մեջ:

Մեր լեզուն ***ճկուն*** է ու ***բարբարոս***,
Առնական է, ***կոպիտ***, բայց միևնույն պահին
Պայծառ է նա որպես ***մշտաբորբոք*** փարոս՝
Վառված հրով անշեջ դարերում հին:
Եվ վարպետներ՝ ***խոնարհ*** ու ***հանճարեղ***,
Հղկել են այն դարեր որպես մարմար,
Եվ փայլել է նա մերթ, ինչպես ***բյուրեղ***,
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար:
Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին...

(Ե. Չարենց)

5. Երկսյուն աղյուսակով դուրս գրիր ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածված բառակապակցությունները:

Հասուն խնձոր, կանաչ դաշտ, դառը ճակատագիր, մեծ աշտարակ, օտար մտածողություն, մեծ ապագա, քաղցր միրգ, քաղցր երազ, ծանր զամբյուղ, ծանր կյանք, երկար բակ, երկար տառապանք, տաք օր, տաք բանավեճ, խոր փոս, խոր աշուն, մեղմ քամի, մեղմ բնավորություն, արծաթե գդալ, արծաթե մազեր, օտար մարդ, կանաչ ճանապարհ, սև մաշկ, սև հոգի, դառը կորիզ, խելացի մարդ, խելացի հայացք, հասուն աղջիկ, սառը ջուր, սառը հայացք:

Ուղիղ իմաստ ունեցող բառեր	Փոխաբերական իմաստ ունեցող բառեր

6. Նախորդ առաջադրանքի փոխաբերական իմաստով գործածված բառակապակցություններով կազմիր նախադասություններ:

7. *Ծանր* բազմիմաստ բառը գործածիր նախադասությունների մեջ քեզ ծանոթ իմաստներով և ընդգծիր փոխաբերական իմաստով գործածված բառերը:

8. Տրված բառերն իրենց ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածիր նախադասությունների մեջ:

Ճանապարհ, մոլախոտ, աստղ, երես, խաղաղ, ոսկի, ծաղիկ, օդ, աչք, գանձ, սուր, քաղցր: